ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Հորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Մեծարգո պարոն վարչապետ,

Ձեզ են դիմում ՀՀ Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի ավագանու անդամները՝ Դեբեդ գետի վրա «Շնող» ՀԷԿ-ի կառուցման խնդրով:

Վերջին ամիսներին Ալավերդու բնակիչները խիստ մտահոգ են՝ Դեբեդին սպասվելիք էկոլոգիական աղետի պատճառով: Այսօր բոլորս ենք պատկերացնում, թե ինչ անդառնալի հետևանքներ կարող է ունենալ ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը Ալավերդու և Դեբեդի ավազանի մյուս բնակավայրերի համար: Եվ որքան էլ ծրագրի իրականացումը դրական երևույթ որակող որոշ մասնագետներ բարձրաձայնում են ՀԷԿ-ի կարևորության ու դրա արդյունքում նաև նոր աշխատատեղեր ստեղծելու մասին, միևնույնն է՝ մենք՝ ալավերդցիներս, քաջ գիտակցում ենք մեզ սպառնացող աղետը:

Մեր ունեցած տեղեկություններով՝ առաջիկա ամիսներին կսկսվեն «Շնող» ՀԷԿ-ի կառուցման աշխատանքները: Հարկ ենք համարում նշել, որ Ալավերդիում արդեն «Շնող» ՀԷԿ-ի կառուցման դեմ համայնքային ակտիվ խումբ է ձևավորվել, կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ ու հանրային քննարկումներ: Խնդիրը հրատապ է, համայնքի ակտիվ հանրությունը պատրաստ է պայքարելու մինչև վերջ: Մենք՝ համայնքի ավագանու անդամներս, պատրաստ ենք սատարելու հանրության կողմից իրականացվող ցանկացած նախաձեռնության:

Ուստի, ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել հույժ կարևոր այս խնդրին և համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ չեղարկելու «Շնող» ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Արտուշ Արեյան
2. Արթուր Դավթյան
3. Կամո Երիցյան
4. Արմեն Կարապետյան
5. Սեյրան Հովհաննիսյան

6. Արայիկ Ձավարյան

7. Հարություն Ձավարյան

8. Ալիկ Նասիբյան

9. Դավիթ Նոնինյան

10. Սվետլանա Պետրոսյան

11. Վիգեն Քառյան